

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Տէր Ներսէսեան Հ. Ներսէս. - Օրացոյցի
200ամեակին առթիւ (1757-1957) . . . 1

ԳԻՏԱԿԱՆ

Քենսուէր. - Օրացոյցի հին էջերէն . . . 6

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Հ. Ն. Տ. Ն. - Հայր Սահակի յիշատակին . . . 15

Տէմիրճեան Կ. - Երէկուան յուզարկաւորու-
թիւնը . . . 19

*** Ցաւակցական նամակներէ . . . 20

*** Ի պատիւ Հ. Սահակ Վրդ. Տէր Մովսէս-
եանի . . . 25

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

FEYDIT FRÉDÉRIC - L'Épopée popou-
laire arménienne . . . 27

ԳՐԱԿԱՆ

ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Հսկումի դիւեր . . . 38

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

*** Յարգանքի բաժին. - Գերենիկ Դեմիր-
ճեան - Շաւարշ Միսակեան . . . 45

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Հ. Կ. Վ. Ա. - Mesrob J. Terzian, « Le
Patriarcat de Cilicie et les arméniens
catholiques (1740-1812) » . . . 46

— Vartan Tekeyan, « Le Patriarcat ar-
menien Catholique de Cilicie 1812-1840
du P. Mesrob Terzian » . . . 46

— Մեսրոպ Վրդ. Թէրզեանի « Յակոբ Գ.
Զուլայեցի » . . . 47

Քիւրճեան Յ. - « Քառասնի բազմութեան ճար-
տարակաւորութիւնը », Ալեքսանդր Սահին-
եանի . . . 47

— « Հայ Ժողովուրդի Պատմութիւն » . . . 47

— « Արեւելեան Հայ Պարբերական Մամու-
լի Պատմութեան », Ա. Բ. Կարինեանի . . . 48

— « Հայ Ժողովուրդի Պատմութիւն » . . . 49

ԼԵԶՈՒԱԿԱՆ

Տէր Ներսէսեան Հ. Ներսէս. - Ի սէր « Մե-
ծաստեան » . . . 50

SOMMAIRE

PAGE

ARTICLE DE FOND

Der Nersessian P. N. - À l'occasion du IIe
centenaire du Calendrier . . . 1

SCIENCE

X. X. - Quelques anciennes pages du Ca-
lendrier . . . 6

NECROLOGIE

D. N. P. N. - À la mémoire du Père Sahak 15

Démirdjian G. - Les funérailles . . . 19

*** - Extraits de lettres de condoléances . 20

*** - En l'honneur du Rév. P. Sahak Der
Movsessian . . . 25

PHILOLOGIE

Feydit prof. Frédéric. - L'Épopée populaire
arménienne . . . 27

LITTERATURE

Serabian Aramaïs - Veillée . . . 38

ECHO ARMENIEN

*** - Dérénik Démirdjian et Schavarch
Missakian . . . 45

RECENSIONS

P. G. Dr. A. - « Le Patriarcat de Cilicie et
les arméniens catholiques (1740-1812) »
du P. Mesrob Terzian . . . 46

— « Le Patriarcat arménien catholique de
Cilicie 1812-1840 » du P. V. Tékéyan 46

— « Jacques IV de Djoulfa » du P. Mesrob
Terzian . . . 47

Kurdian H. - « L'architecture de la basilique
de Kassagh » d'Alexandre Sahinian . . 47

— « Histoire du peuple arménien » . . . 48

— « Aperçu de l'histoire de la presse péri-
odique arménienne » d'A. B. Karinian . 49

LINGUISTIQUE

Der Nersessian P. N. - Pour l'amour de la
« Toute Merveilleuse » (langue arménienne) 50



1843 - 1957
ՃԺԵ. ՏԱՐԻ

ԹԻԻ 1 - 2

ՅՈՒՆՈՒՄԱՐ - ՓԵՏՐՈՒՄԱՐ

ԲԱԶՄԱՎԵՅ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXV^e année, 1957, N. 1-2 Janvier - Février

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՕՐԱՑՈՅՑԻ 200ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

1757 - 1957

Տոմարական գիտութիւնները շատ հին
ժամանակներէ ի վեր ծաղկած են Հայաս-
տանի մէջ: Արդէն իսկ Քրիստոսէ առաջ
հինգերորդ դարուն՝ մեր նախնիք թողլով
լուսնային օրացոյցը, որդեգրած են արե-
գակնային դրութեան տոմարը, ստեղծե-
լով Հայկայ շրջանը, նման եգիպտական
Սոթիսի շրջանին: Հայերը իրենց դարա-
շրջանի գլուխը կապած են Շնիկ աստղին
արեգակնային ծագումին հետ, որ այն
ժամանակ հաւանօրէն կը հանդիպէր դար-
նան գիշերահաւասարին: Տարին ունէր
երեսներեայ տասներկու ամիսներ եւ Ա-
ւելաց հինգ օրեր: Հիւսիսի շարժումը
անձնօրէն էր նահանջ տարիի դադա-
ւաւարը: Հետեւաբար ամիսները (Նա-
խարհի 1) շարժական էր, ու արեգակ-
նային շրջան տարուան ընթացքին՝ մէկ օր
կը կանխէր. եւ այսպէս, քաղցրով տար-
ուան բոլոր օրերուն վրայէն, 1460 տար-
ուան ընթացքին՝ ամբողջական մէկ տարի
կանխելով՝ կը դուրսդիպէր միեւնոյն օր-
ուան: այդ կէտին կ'աւարտէր դարաշր-
ջանը: Պատմական տուեալներու համա-
ձայն, 428ին՝ երբ կը տապալէր մեր Ար-
շակունի թագաւորութիւնը, կ'աւարտէր

նաեւ Հայկայ շրջանը: այդ տարին Ամա-
նորը կը հանդիպէր Օգոստոսի 11ին, ըստ
Յուլեան հին տոմարի: Իսկ ըստ աւանդու-
թեան՝ 428ի Նաւասարդով կը սկսի Հայկի
Գ. շրջանը:

Քրիստոնէութեան թափանցումէն վերջ՝
հայերը թէեւ անորոշիւ պահած են իրենց
տոմարական հին դրութիւնը, սակայն
կրօնական ու եկեղեցական տօներու հա-
մար ստիպողաբար ընդունած են անշարժ
տոմար մը, Յուլեան կոչուածը, ըստ յոյն
քրիստոնէայ տոմարագէտներու պատրաս-
տած աղիւսակներուն: Այսպէսով, Գ. դա-
րէն սկսած, հին քաղաքական օրացոյցին
կից՝ կեանք կ'առնէ նաեւ եկեղեցական
օրացոյց մը, որ որոշապէս գործածուած
կը դառնայ Ս. Թարգմանիչներու օրով:

Ինչպէս յայտնի է, այս երկու տոմար-
ները իրարու հետ հաշտ չէին ընթանար:
նորը ունէր հաստատուն ամիսներ, չորս
տարին անգամ մը նահանջ, անհաւասար
ամիսներ, շարժական բաժանում: Աս-
կէ՝ տոմարագիտութիւնը կը դառնայ կեն-
սական ուսումնասիրութեան աղբիւր, իր
բարդ ու խրթին հարցերով: մէկ կողմէ
համեմատական աղիւսակներու դժուարին

կնճիւղով, միւս կողմէ՝ նախաքրիստոնէական տոմարը վերակազմելու եւ անշարժ տոմարի վերածելու տենչով:

Պատմութեան հետ դարերն ի վեր մադըցելով, ահա Զ. դարու կէսին՝ կը նըշմարենք Հայաստանի մէջ տոմարական հսկայ թեղաշրջում: 552ին կ'աւարտէին Անդրէաս Բիւզանդացիի պատրաստած 200ամեայ աղիւսակները, որոնց համաձայն առաջնորդուած էին նաեւ հայերը իրենց եկեղեցական տօներուն անշարժ կատարման մէջ: Տատամսոտ շրջան մը անցնելէ վերջ, հաւանօրէն Մովսէս կաթողիկոսի ատեն, Զ. դարու երրորդ քառորդին, Դուինի ժողովով հայերը անցան նոր կարգադրութեան մը: Տոմարադէտներու գլխաւորն էր Աթանաս Տարօնեցին, Գլաւայ Ս. Կարապետի Առաջնորդը, հմուտ ու գիտնական անձնաւորութիւն մը: Կորոշուի կրօնական տօներու համար առաջնորդ առնել էաս Աղեքսանդրացիի կազմած 532ամեայ ժամանակաշրջանը, եւ ասոր առաջին տարին կցել Անդրէասեան շրջանի վերջաւորութեան, այն է 552ին: Այսպէսով 552 թուականը դարձաւ հայկական նոր դարագլուխի սկիզբ:

Է. դարուն Անանիա Շիրակացիի լուսաւոր դէմքը մեր տոմարական պատմութիւնը կը հասցնէ իր փառքի գագաթնակէտին, բիւզանդական տոմարագիտութեան մեծագոյն վարպետներուն զուգահեռ շաւիղով: Անաստաս կաթողիկոսի խնդրանքով՝ նա կը ձեռնարկէ անշարժ տոմարի մը կազմութեան, իր բովանդակ թուարանական հմտութիւնն ու տիեզերածաւալ գիտութիւնը ի սպաս դնելով հոն. կը կազմէ 532ամեայ շրջանի աղիւսակ մը: Չեն պակսիր բանասէրներ՝ որոնք կը համարին թէ Շիրակացիի կազմած աղիւսակի սկիզբը եղած ըլլայ նաեւ հայոց թուականութեան անցած է դար մը ու: Դժբախտաբար, կաթողիկոսին մահով՝ կիսատ կը մնայ ծրագիրը:

Այդ ժամանակաշրջանէն առդին կ'ընդ-

հանրանայ հայկական նոր թուականը, զոր դռներու համար պէտք ենք միշտ Փրկչական թուականէն 551 հանել:

Հինդ դար վերջ, ահա ճղնաժամային երկրորդ շրջան մը, երբ կը լրանայ էասեան կոչուած տոմարական ժամանակաշրջանը (532 տարի) եւ այլեւս անդործածելի կը դառնան Տարօնեցիի կամ Շիրակացիի կազմած աղիւսակները: Այս աղիւսակներու շնորհիւ էր որ Յուլեան տոմարով նշանակուած օրերը եւ տօները կ'արտայայտուէին հայ հին քաղաքական տոմարի ամսաթիւերով: Բայց ահա դարձեալ լուսաշող դէմքեր ինչպէս Յովհաննէս Կոզեռն եւ Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէր. մանաւանդ վերջինը, նշանաւոր իր բարեկարգած անշարժ տոմարով, Սարկաւազադի կոչուած, որ որոշ հանգրուան մը կը ներկայացնէ մեր տոմարական պատմութեան մէջ: Սարկաւազ կ'առաջարկէ անշարժ ամսնոր, Օգոստոսի 11ին. կը մտցնէ նահանջ տարիի գաղափարը, Աւելեաց հինգ օրերը վերածելով վեցի՝ չորս տարին անգամ մը: Ասով մեր թէ՛ եկեղեցական եւ թէ՛ քաղաքական տոմարները հաստատուն, յստակ ու յայտնի օրէնք ու կանոնաւորութիւն մը ստացան: Եւ ասոնց վրայ ձեւացան մեր Յայամաւորքները, հաստատուն օրերու վրայ դրնելով հաստատուն տօներ եւ սուրբերու յիշատակութիւններ: Սարկաւազի թուականը կը սկսի 1084 թուականով (երբ Նաւասարդի 1ը կու գար Փետր. 29ին. ինք գայն կը փոխադրէ մինչեւ Օգոստոս 11): Այս թուականը շատ մեծ ընդունելութիւն չի գտներ. աւելի կը զործածուի Զորդեանի կողմերը. կը գերիշխէ դարձեալ հին քաղաքական իր շարժական ամսնորով, որու փոփոխուած ձեւը միայն կ'օգտագործուի կրօնական շրջանակներու մէջ՝ իր եկեղեցական տոմար:

Ու կը հասնինք ԺԴ. դար, երբ պաշտօնապէս Ատանայի ժողովով, 1317ին կ'ընդունուի Յուլեան տոմարի գործածութիւնը, որու Յունուար 1ը այն տարի կը գու-

դադրիւ էր Նաւասարդի 1ին: Ատեն մը կ'ընդհանրանայ Փրկչական թուականի գործածութիւնը: Սակայն քաղաքական տոմարը իր շարժական ամսնորով չի դադրիր ապրիլէ:

Յաջորդաբար Յակոբ Ղրիմեցին (ԺԵ. դար), Ազարիա Սեբաստացին եւ Ազարիա Զուղայեցին կ'ըլլան մեր տոմարական պատմութեան զլխաւոր յայտնութիւնները: 1616ին, երբ կը լրանային Սարկաւազի թուականին 532 տարիները, դարձեալ տոմարի նորոգութեան շարժում մը կը սկսի Նոր Զուղայի մէջ. Ազարիա կը փորձէ նոր անշարժ տոմար մը ստեղծել՝ Սարկաւազի տոմարէն քիչ մը տարբեր ուղղութեամբ. ինք ալ հաստատուն ամսնոր կ'առաջարկէ, բայց գայն կը կապէ գարնան դիշերահաւասարին. Աւելեաց ամսուան հինգ օրերը անփոփոխ կը պահէ, նահանջ տարուան վերջին ամիսը 31 օրուան վերածելով: Այս տոմարը նեղ ընդունելութիւն մը կը գտնէ միայն:

Արդէն իսկ մտած ենք տպագրական դարը, երբ հետզհետէ կ'ընդհանրանայ Փրկչական թուականի գործածութիւնը՝ ըստ Յուլեան տոմարի: Հայկական թուականի գործածութիւնը չի դադրիր եւ կը շարունակուի մինչեւ ԺԸ. դարու վերջերը՝ պաշտօնական նամակներու, կոնդակներու, տապանաքարերու եւ յիշատակարաններու մէջ: Այսպէս Զամբանի պատմութեան ընթացքին, գրեթէ միշտ յիշատակուած են հայկական թուականները, 552ի հաշիւով:

Տոմարական շարժումը չի կասիր: Եթէ ակնարկ մը տանք տպագրական դիւտէն առդին կատարուած տոմարական հրատարակութիւններուն, պիտի նշմարենք տարօրինակ յաճախութիւնը անոնց: Գոնէ աւելի քան յիսուն տպագրութիւն նշանակուած է Հ. Գար. Զարհանալեան իր Նշանակելի է այն որ հայաստան առաջին տպագրութեան մէջ (1565-1883): Նշանակելի է այն որ հայաստան առաջին տպագրութիւնը, 1512ին, Զուղայեցի Յակոբ Մեղապարտի ձեռքով, Վենետիկ հրա-

տարակուած ՊԱՐԱՍՏՈՒՄԱՐ մըն է:

Երկրորդ հայ տպագրիչը՝ Արքար Դպիր Եւդոկիացի, 1565ին, Վենետիկի մէջ կը հրատարակէ հայերէն առաջին օրացոյցը ԽԱՌՆԱՅՓՆԹՈՒՐ ՏՈՒՄԱՐԻ անունով, մէկ թերթի վրայ, տալով քանի մը տարիներու լուսնային խաւարումներու ցուցակն ալ: Երեք տարի վերջ, այս անգամ Պոլսոյ մէջ, նոյն Արքարի տպարանէն լոյս կը տեսնեն ՏՕՆԱՅՈՅՑ, ՊԱՐԱՍՏՈՒՄԱՐ:

Քառորդ դար վերջ, այն է 1584-6ին, Յովհաննէս Տէրզնցի, Հոռոմի մէջ, կը սպէ ՏՈՒՄԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՅԱԻՏԵՆԱԿԱՆՆ, որ թարգմանութիւնն է Յուլեան հին տոմարին տեղ՝ Գրիգոր ԺԳ. Պապին կարգադրութեամբ լատին լեզուով հրատարակուած նոր տոմարին, որ սկսած էր 1582ին: Ու կը սկսի շարժումը դէպի նոր տոմար: Վերածնունդի շրջանին, Մխիթար Արքայայր եւս իր կրթական ծրագրին մաս դարձուցած է տոմարական հարցը, եւ 1733ին հրատարակած է ՏՕՄԱՐ ԿԱՐՁԱՌՕՏ. այսինքն համառոտութիւն հնոյ Տօմարին Հոռոմայեցոյց, որով հասարակաբար վարի ազգս Հայոց, շարակարգեցեալ դիւրին ոգիս ի յօգուտ պարգաւմտաց: Այս զրբոյցը լոյս տեսած է Սաղմոսարանի մը հետ եւ յաջորդաբար 7-8 անգամ, մինչեւ 1821:

1782ին, Հ. Վրթանէս Ասկերեանի աշխատասիրութեամբ լոյս կը տեսնէ ՄՇՏՆՁԵՆԱԻՐ ՊԱՐԱՍՏՕՄԱՐ հատորը, արդիւնք մանրագնին ուսումնասիրութիւններու եւ պրպտումներու, զոր շատ լաւ կը բացատրէ ճակատի երկայն խորագիրը. «Աղիւսակեալ շարադրութեամբ ամենայն տօնից տէրութեանց, եւ տօնից սրբոց եւ աւուրց պահոց. գետեղեալ գնոսա կարգաւ ի վերայ ամսոյ աւուրց՝ ըստ շարժականութեան իւրեանց առ իւրաքանչիւր տարեգիր. ըստ վաղեմի ծիսին որով վարին եկեղեցիք Հայաստանեայց ի կառարումն տօնից: Յոր յարի եւ տարեցոյց, աւրեքեր դնելով իւրաքանչիւր աղիւսակի գիրոց աւուրց պատշաճ կարգաւորութիւն

շարականաց եւ ընթերցումն զվասն առ-
ձեռն պատրաստ ունելոյ պաշտօնէից ե-
կեղեցւոյ ի կատարումն ժամակարգու-
թեան: Հոս յայտնի է մտադրութիւնը հե-
ղինակին. օգտաշատ ուղղութիւն մը տալ
եկեղեցականին ձեռքը, որ գիտնայ իր օ-
րական աղօթքներու ցանկը՝ զանազան տո-
ներու եւ պահքերու, զորս յաճախ ինք
եկեղեցականը պէտք էր գտնել ըստ տո-
մարական հաշիւներու:

1818ին Հ. Խաչատուր Սիւրմէլեան իւր
հրատարակէ ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ընդ-
հանուր եկեղեցական եւ քաղաքական մե-
ծածաւալ երկը, բաղմամբ աղիւսակներ-
ով եւ աստղաբաշխական գիտելիքներով
համադրուած:

Ս. Ղազարու մէջ ծայր տուած տոմա-
րական այս վերադարձումին համընթաց՝
ազգային հաստատուն եւ գործնական օ-
րացոյց մը ունենալու հարկը հետզհետէ
աւելի կը զգացուի: Ու տոմարական ա-
մուր հիմնուելով լոյս կը տեսնէ ճիշտ
երկու հարիւր տարի առաջ, 1757ին, ան-
գլանիկ օրացոյցը, ըստ Յուլեան տոմա-
րի, աշխատասիրութեամբ Պոլսեցի Հ.
Յակոբոս Վրդ. Չամչեանի (1724-1805),
որ երէց եղբայրն էր մեծանուն պատմա-
հօր:

Այնուհետեւ ամբողջ երկու հարիւր տա-
րի անընդհատ լոյս տեսած է այդ օրա-
ցոյցը, հետզհետէ զգալի փոփոխութիւն-
ներով, յաւելեալ ճոխացումներով եւ զա-
նազանեալ բովանդակութեամբ:

Այստեղ երախտագիտութեամբ պիտի
ուզէինք արձանագրել անունները այն
բազմապատասխան տոմարագէտներուն, ո-
րոնք տարին առ նուազն քանի մը ամիս
զոհած են՝ նուիրական պարտականու-
թիւն մը յանձն առնելով՝ Օրացոյցին
պատրաստութիւնը, իր տոմարական յա-
րակից աշխատանքներով: Ժամանակին
հայերը շատ հպարտ զգացած են իրենք
գիրենք երբ ձեռքերին հասած է իրենց
սեփական օրացոյցը. քաղաքակիրթ ազգե-
րու շարքին, այս մարզին մէջ ալ ետ չենք

մնացած, շնորհիւ Յակոբ Մեղապարտին,
Արզար Դպիրին եւ մանաւանդ Վերածը-
նունդի հիմնադիր վաստակաւոր Հայրե-
րուն: Յանկը զոր կու տանք, կը ներկա-
յացնէ անուններ՝ որոնցմէ ոմանք արդէն
խակ ծանօթ են հայ բանասիրութեան:

1757-1777	Հ. Յակոբոս Չամչեան
1778-1779	Հ. Սուքիաս Աղամալեան
1780-1793	Հ. Աղեքսանդր Ինճիճեան
1794	Հ. Խաչատուր Սիւրմէլեան
1795-1797	Հ. Մատթէոս Մաղաքեան
1798-1799	Հ. Խաչատուր Սիւրմէլեան
1800-1809	Հ. Մատթէոս Մաղաքեան
1810-1819	Հ. Խաչատուր Սիւրմէլեան
1820-1829	Հ. Վարդան Յովսէփեան
1830-1839	Հ. Աղեքս. Պէշիկթաշեան
1840-1850	Հ. Գաբրիէլ Այվազովսքի (Օգնութեամբ իր աշակերտ- ներուն՝ Հ. Մանուէլ Քաջու- նիի, Հ. Աւքեսնտ Գուրգէն- եանի)
1851-1880	Հ. Հմայեակ Պապիկեան
1881-1916	Հ. Սերոբէ Ապտուլահեան
1917-1926	Հ. Խորէն Սինանեան
1927-1934	Հ. Յակոբ Տիրոյեան
1934-1936	Հ. Անտոն Զնտոյեան
1937-1957	Հ. Հմայեակ Կէտիկեան

Ամբողջացնելու համար մեր տոմարա-
կան գրականութեան ընդհանուր պատկե-
րը, կը բաւէ փոքրիկ ակնարկ մը՝ Ժ2.
Դարու վերջին շրջանին, երբ ազգին մէջ
ծայր կը սկսի տալ, թէեւ դանդաղ քայ-
լերով, օրացուցական շարժում մըն ալ:

1761ին Կ. Պոլսոյ մէջ, Էջմիածնի Կա-
թողիկոսին նուիրակը Սիմէոն (հետագա-
յին Կաթողիկոս ինքն ալ) տպել կու տայ
Վենետիկի օրացոյցին յար եւ նման օրա-
ցոյց մը՝ հետեւեալ վերնագրով. Տարե-
կան Օրացոյց վասն առաջակայ տարւոյս
յորում է թուական Փրկչին մերոյ 1761.
Եւ մեծ թուական Հայոց ըստ հնոյ տօմա-
րի մերում 1210. Եւ փոքր թուական Հա-
յոց ըստ հնոյ տօմարիս մերոյ 145.

(Կ'ակնարկէ Աղարիայի թուականին,
1616էն հաշուելով): Յորում ցուցանին
յայտնապէս անաշխատ եւ անաղալ ամե-
նայն տօմի սրբոյ եկեղեցւոյս Հայոց Տե-
րունականի. եւ սրբոց շարժականի եւ ան-
շարժականի. պահի եւ ամենայն երեւելի
աւուրք ըստ սահմանի Հայաստանեայց
սրբոյ եկեղեցւոյ: Հանդերձ օրական ձայ-
նիւ եւ լուսնական աւուրքի, ընդ ինքեան
ունելով եւ գաւուրս Հայոցս եւ Հռոմայե-
ցւոյցն, ի փառս Աստուծոյ...:

Տասնեւհինգամեայ ընդհատումէ մը
վերջ, 1776ին, Մատթէոս Դպիրի խմբա-
գրութեամբ լոյս կը տեսնէ ուրիշ օրացոյց
մը, Տետրակ Տօմացոյցի, որ կը շարու-
նակուի յաջորդ տարիներն ալ:

1778ին երեք օրացոյց կան ազգին մէջ,
ըստ Հ. Գար. Զարբհանալեանի. մէկը Վե-
նետիկոյ, միւս երկուքը Կ. Պոլսոյ:

1786ին օրացոյց մըն ալ լոյս կը տեսնէ
Փեթրպոլսի, 1795ին Նոր Նախիջեան,
1797ին Աթլարիսան, 1816ին Կալկաթա:
Յաջորդաբար Թուրքիոյ եւ Ռուսիոյ զա-
նազան քաղաքներուն մէջ օրացուցական
հսկայ արշաւ մը կը սկսի (Թիֆլիս, Թե-
ոդոսիա, Ռոստով, Էջմիածին, Երուսա-
ղէմ եւն...): Մանաւանդ Պոլսոյ մէջ մըր-
ցանիչը կը շահի Յովհաննէս Գ. Միւհսէն-

տիսեան, 1840ին, հարիւր հազար օրինա-
կով, ըստ Թէոդիկի (Տիպ ու տառ, 1912,
էջ 75). մինչ սովորաբար օրացոյցի մը
սպառման թիւը տասը հազարի մէջ կը
խաղար, ըստ նոյն Թէոդիկի վկայու-
թեան:

Ահա այսպէս կ'ունենանք տոմարական
հսկայ գրականութիւն մը, որու առջեւ
չենք գիտեր ինչպէս դասել մեր զարման-
քը, երբ նկատի առնենք հայ ամենամեծ
թուաբան տոմարագէտին Անանիա Շիրա-
կացիի այն գանդատը՝ թէ մեր ազգը այս
տեսակ գիտութիւններու (թուաբանու-
թիւն, տոմարագիտութիւն) սիրող չէ,
մանաւանդ թէ ծոյլ է եւ ճանապարհ (Ինք-
նակենսագրութիւն):

Ոսկի խրատ մը դարձեր է անշուշտ այս
սիրալիր գանդատը, եւ հրահրուած Շիրա-
կացիի լուսաւոր օրինակէն, հայ ժողո-
վուրդը դարերու ընթացքին ապրել ու
մաքառել է տոմարական կնճռոտ հաշիւ-
ներու սեղանին վրայ՝ պահելով միշտ ազ-
գային աւանդական գիմադիծը նաեւ այս
մարզին մէջ, եւ վարպետօրէն գիտցեր է
օգտուիլ քաղաքակիրթ ազգերու յառաջ-
դիմական նորութիւններէն:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ